ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/208

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23228-18 գրությամբ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի 10.12.2018թ. թիվ 061/11326 գրության հիման վրա, 13.12.2018թ. թիվ 27/26-3/23228-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.12.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն 09.11.2018թ. դրությամբ հարկային չվճարված որևէ պարտավորություն չի ունեցել, քանի որ նախորդող վճարումները գերազանցում են վերը նշված պարտավորության չափը:

Ըստ փաստաթղթերի տեղի է ունեցել թյուրիմացություն «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Լոռու մասնաճյուղից ֆինանսների նախարարություն վճարման անդորրագրի տվյալներում գրվել է Ընկերության տվյալները, իսկ պարտատիրոջ անվան փոխարեն նշվել է Ընկերության տնօրենի անուն ազգանունը:

Վճարումները կատարվել են 07.09.2018թ.՝ 17 250 ՀՀ դրամ, 28.09.2018թ.՝ 111 947 ՀՀ դրամ, 31.10.2018թ.՝ 56 300 ՀՀ դրամ: Սակայն բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների անուշադրության պատճառով Ընկերությանը պատճառվել է վնաս: Մասնավորապես՝ դադարեցվել է Ընկերության մասնակցությունը «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/100» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/208 ընթացակարգի շրջանակներում 19.12.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Վանաձորի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.12.2018թ. թիվ 061/11326 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/100» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համար («Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն), հրավերով սահմանված կարգով ՊԵԿ հարցում

ուղարկելուց հետո ստացվել է հարցման պատասխան, որում նշված է, որ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ, այդ իսկ պատճառով մասնակցի հայտը մերժվել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/208 ընթացակարգի շրջանակներում 19.12.2018թ. ժամը 10:40-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/100» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **09.11.2018թ.** հայտ է ներկայացրել «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության կայացված որոշմամբ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 154 190 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23228-18 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 10.12.2018թ. թիվ 061/11326 գրությունը և կից փաստաթղթերը, «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ի 26.12.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/100» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 09.11.2018թ. հայտ է ներկայացրել «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության կայացված որոշմամբ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 154 190 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի օնլայն ինտերնետային ծառայությունների համակարգով իրականացված 07.09.2018թ. թիվ 212, 28.09.2018թ. թիվ 229, 31.10.2018թ. թիվ 264 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ հարկերի միասնական «900008000490» հաշվեհամարին կատարվել է համապատասխանաբար 17 250 ՀՀ դրամ, 56 300 ՀՀ դրամ, 111 947 ՀՀ դրամի (ընդհանուր՝ 185 497 ՀՀ դրամ) վճարումներ: Նշված վճարման հանձնարարականներում որպես վճարող նշվել է «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ի անվանումը, սակայն «Պարտատիրոջ անունը» դաշտում նշվել է Ընկերության տնօրենի անուն ազգանունը:

Ուսումնասիրելով վերոհիշյալ վճարման հանձնարարականները, համադրելով դրանք Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրված ժամկետանց հարկային պարտավորության չափի հետ, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրվել է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, այնուամենայնիվ, Ընկերության կողմից հարկերի միասնական հաշվին կատարվել են համապատասխան վճարումները, որոնք սակայն վճարման հանձնարարականի մեջ «Պարտատիրոջ անունը» դաշտը թերի լրացնելու պատճառով, սահմանված ժամկետում չեն արտացոլվել որպես Ընկերության կողմից կատարված վճարումներ:

Նման պայմաններում հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23228-18 գրությամբ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06945602) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ